

ՍԵՐԳԵՅ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քորանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտության գծով փոխտնօրեն, տ.գ.դ., պրոֆեսոր

ԷՌՈՒԱՐԴ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քորանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, տ.գ.դ., պրոֆեսոր

ՖԻՆԱՆՍԱՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԵՏՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՍԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՍԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների վերացման համար, հատկապես ՀՀ գյուղատնտեսության ոլորտում, այժմ պահանջվում է կոնկրետ արդյունավետ միջոցառումների իրականացում, որոնք կնպաստեն ճգնաժամի հետևանքների լիկվիդացման ու գյուղատնտեսության հետագա զարգացմանը: Նախ նշենք, որ Հայաստանի գյուղատնտեսությունը ինչպես նախկինում, այնպես էլ անկախությունից հետո ունեցել է և ունի իր կարևոր ու վճռորոշ դեր՝ հանրապետության սոցիալ-տնտեսական, բնակչությանը սննդի ապահովման, աշխատատեղերի ստեղծման, երկրի պարենային ապահովման կարևոր գործում:

Վերջին հինգ տարիների (2005-2009թ.) տվյալներով գյուղատնտեսության ոլորտի տեսակարար կշիռը երկրի համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ) կազմել է միջինը 18%, իսկ սննդարդյունաբերության կշիռն էլ կազմում է 5,5%:

Իհարկե, ճգնաժամը նաև բացահայտեց Հայաստանի տնտեսության թույլ կողմը. դրանք են՝ տնտեսության դիվերսիֆիկացման ոչ բարձր մակարդակը և մեծ ծավալի դրամի անհրաժեշտությունը, մրցունակության ցածր մակարդակը:

Առաջնային խնդիր է այս ոլորտի համար նախատեսված վարկային միջոցների պակասը: Գյուղական շրջաններում միկրոձեռնարկությունների ու ձեռներեցների համար լուրջ դժվարություն է նոր գործ ձեռնարկելու և իրականացնելու հարցում անհրաժեշտ կապիտալի բացակայությունը: Կառավարությունը չի տնօրինում համապատասխան ռեսուրսներ՝ գյուղատնտեսությունը վարկավորելու համար: Առևտրային բանկերը կողմնորոշված են հիմնականում մեծ ձեռնարկությունների ուղղությամբ և երբեմն հակված չեն լինում փոքր տնտեսություններին վարկավորելու գործում: Իսկ գյուղական շրջաններում միկրովարկավորման և փոքրածավալ ֆինանսավորման շուկան առկա է, և գյուղական բանկային համակարգի լրիվ ձևավորումն ու դրանց գործունեության ակտիվացման գործընթացը՝ գերակա խնդիր:

Գյուղական տնային տնտեսությունները, ապրուստի միջոցներ ձեռք բերելու համար, բացի գյուղատնտեսությունից, ունեն խիստ սահմանափակ ընտրություն: Հայաստանում գյուղական գրաղվածության մոտ 4/5 մասը դեռ ներառված է գյուղատնտեսության ոլորտում, որը բարձր ցուցանիշ է նույնական անցումային տնտեսությունների համար: Սա մասամբ բացատրում է այն փաստը, որ գյուղատնտեսությունը թեև դանդաղ, բայց զարգանում է, սակայն այն լրիվ մասնագիտացված չէ և չունի անհրաժեշտ առևտրային կողմնորոշում, ինչպես նաև չունի հաստատուն առաջընթաց ու հետադարձ կապեր, որոնք կիսաներն աճը գյուղական տնտեսության մնացած հատվածում:

Գյուղատնտեսության ոլորտի մեկ այլ յուրահատկությունն էլ մասնակի գրաղվածությունն է: Գյուղական աշխատութի միայն 1/3-ն է աշխատում ամբողջ տարին, մնացածի համար գրաղվածությունն ունի խիստ սեղոնային բնույթ:

Զարգացած տնտեսություն ունեցող երկրների փորձը ցույց է տալիս, որ շուկայի մրցակցությանը դիմանալու, իրենց արտադրանքն առանց դժվարության իրացնելու, ընդհանուր առմամբ՝ արտադրությունը զարգացնելու նպատակով, ֆերմերները համախմբվում են տարբեր տիպի կոոպերատիվներում, ինչը թույլ է տալիս նրանց համատեղ ուժերով հաղթահարել արտադրության կազմակերպման, ինչպես նաև՝ գյուղմթերքների իրացնան ժամանակ առաջացած խոշնդրությունը:

Այստեղ գլխավոր նպատակը գյուղացիական տնտեսությունների խոշորացումն է, որը խթանելու համար առաջին հերթին անհրաժեշտ է ընդունել մի շարք նոր օրենքներ և կատարել օրենսդրական փոփոխություններ՝ կազմած խոշորացվող տնտեսությունների իրավահարաբերությունների կարգավորման, արտոնյալ, երկարաժամկետ անտոկու վարկերի և այլ արտոնությունների տրամադրման հետ:

Գյուղացիական տնտեսությունների խոշորացումն իրոք կարևորագույն խնդիր է: Անտարակույս, գյուղատնտեսությունը բավականին խոցելի է, ինչն առաջին հերթին պայմանավորված է գյուղացիական տնտեսությունների փոքր չափերով (մեկ տնտեսությանը միջինը բաժինն է ընկնում 1,4 հա գտ. հողատեսքեր, այդ թվում՝ 1,1 հա վարելահողեր), հողաբաժինների կտրտվածությամբ (գտ. արտադրությունը իրականացվում է ավելի քան 1,2 մլն. հողակտորների վրա (տարբեր տեղերում), ոլորտը բնուրագրվում է վարման բարձր ռիսկայնությամբ: Հողի շուկան գրեթե չի գործում:

‘Իեռևս անկատար է և տնտեսավարման ներկայիս պայմաններին չի համապատասխանում՝ արտադրական, շուկայական (ֆինանսական) և սոցիալական ենթակառուցվածքների գործունեությունը: Բնակչիմայական պայմաններն ել իրենց ազդեցությունն են ունենում արտադրության վրա:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վարելահողերը վաստ են օգտագործվում: Վերջին 4 տարիների կտրվածքով վարելահողերի օգտագործման միջին մակարդակը կազմում է 69,7%:

ՀՀ գյուղատնտեսական հողատեսքերի տարածքը և կառուցվածքը

Գյուղատնտեսական հողատեսքեր	Հողատարածքը հազ. հա	Տեսակարար կշիռ, %
Վարելահողեր	449,41	21,20
Բազմամյա տնկարկներ	32,56	1,54
Խոտհարքներ	127,35	6,0
Արոտներ	1.116,56	52,06
Այլ հողատեսք	394,43	18,60
Գյուղատնտեսական նշանակության հողեր, ընդամենը	2.120,31	100,0

Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ վերջին չորս տարիների տվյալներով հանրապետության ցանքատարածությունների 1հա-ից միջին հաշվով ապահովվել է 951 հազար դրամի համախառն արտադրանք, որը, գնահատելով 145 հազար հա չօգտագործվող վարելահողերի հաշվով, ստացվում է, որ հողային ռեսուրսների լիարժեք չօգտագործման հետևանքով ստացված համախառն արտադրանքը կազմում է 138 մլրդ դրամ, որը այդ նույն ժամանակաշրջանի բուսաբուծության և անասնապահության համախառն արտադրանքի համապատասխանաբար 34 և 22%-ն է: Ստեղծված վիճակը գյուղացիական տնտեսություն-

ների եկամուտների կրծատման պատճառն է, որի հետևանքը գյուղական բնակավայրերում աղքատության դեռևս բարձր մակարդակն է:

Առաջարկում ենք աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման ոլորտում նոր աշխատանքային ռեսուրսների ընդգրկման տեսանկյունից կարենոր նշանակություն տալ ճկուն պայմանագրային համակարգերի կիրառմանը արտադրող - վերամշակող - սպառող ոլորտում: Այն գյուղացիական տնտեսություններին հնարավորություն կը նետառի ունենալ արտադրված մթերքի իրացման երաշխիք, կանխավճարներով լրացնել շրջանառու միջոցների սեղոնային, հատկապես գարնանային ժամանակահատվածի ճեղփածքը: Պայմանագրային հարաբերությունները շահեկան են նաև վերամշակող ձեռնարկությունների համար, քանի որ դրանով ոչ միայն ապահովում է անհրաժեշտ չափի հումքի երաշխավորված քանակություն, այլև տվյալ ձեռնարկությունում աշխատող մարդկանց՝ երկարաժամկետ գրադադարձություն:

Միանգամայն անբավարար է արտադրատեխնիկական սպասարկումը: Շատ վատ է վիճակը տեխնիկայով զինվածության բնագավառում: Եղած տեխնիկան ինն է ու մաշված: Ապահովվածության ցուցանիշը գործող տեխնիկայի համար 100 գյուղացիական տնտեսության հաշվով կազմում է՝ կոմբայններինը՝ 0,9%, տրակտորներինը՝ 3,4%, տրակտորային կցասայլերինը՝ 1,6%, գութաններինը՝ 0,9%, շարքացաններինը՝ 0,46%, խոտհնձիչներինը՝ 0,5% և այլն:

Օրինակ, տրակտորների մի մասը՝ 16%-ը, օգտագործվում է 30 տարուց ավելի, 93 տոկոսը՝ 25 տարուց ավելի: Մաշված տեխնիկայի շահագործումը հանգեցնում է վառելանյութի և քսայուղերի գերածախսի, բերքի գերնորմատիվային կորուստների, քանկացնում նորոգման և տեխսպասարկման աշխատանքները: Ուրեմն, ոլորտում՝ որպես օրախնդիր, առաջարկվում են տեխնիկական վերազինմանն ուղղված արտակարգ միջոցառումների կազմումը, նպատակյին ծրագրերի մշակումը, լիզինգի կիրառումը: Առաջարկվում է, գյուղացիական տնտեսություններում արտադրական սպասարկման և պարարտանյութերով, բունաքիմիկատներով ու այլ նյութական միջոցներով ապահովման խնդրի լուծման նպատակով, համայնքներում ստեղծել վճարովի ծառայություն կատարող կառույց: Պետության կողմից տարբեր ծրագրերով հանրապետություն ներկրված գյուղատնտեսական տեխնիկան, պարարտանյութերը և այլն, տրամադրել ոչ թե առանձին անհատ հողագործներին, այլ համայնքներում ձևավորվող նաև ազիտացված կազմակերպությանը՝ գյուղացիական և այլ տնտեսությունների սպասարկելու համար:

ՀՀ ազրովերամշակման ոլորտն ունի գարգացման զգալի չօգտագործված ներուժ: Հայաստանում ներկայում գործում են խաղող մշակող 63, պտուղ և բանջարեղին վերամշակող՝ 53, կաթ վերամշակող՝ 252, միս վերամշակող՝ 83, ոչ ալկոհոլային խմիչքների արտադրությամ՝ 47, հացամթերման՝ 154, ալրադացային՝ 56 ընկերություններ: Սակայն, համրապետության սննդարդյունաբերության ոլորտի արտադրական հզորություններ օգտագործվում են ընդամենը 35-40%-ով:

Այժմ առաջնահերթ են հետևյալ խնդիրները՝ ազրովերամշակող ընկերությունների տեխնիկական վերազինում, նոր տեխնոլոգիաների ներդրում, վարկային միջոցների ձեռքբերման մատչելիության բարձրացում, ինովացիոն ծրագրերի իրականացման ուղղությամբ պետական աջակցության ընդառնում: Կարենոր են նաև արդիական ու այլ կենսատեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված սննդամթերքի շրջանառության կանոնակարգումը և այդ ոլորտում արտադրական ուժերի ռացիոնալ տեղաշխությունը, նաև գյուղատնտեսության ապահովության համակարգի ներդրումը, հակակարկտային տեղակայանների ցանցի

ընդլայնումը: Այս տարվա մայիս ամսվա «ՀՀ» օրաթերթերից մեկում ներկայացված է ՀՀ գյուղատնտեսության նախարարության՝ «Բնակլիմայական պայմաններն այս տարի հնարավորություն չեն տալիս ավարտին հասցնել գարնանացանը: Անդադար տեղացող անձըներից ցանքսը փտում է, օրինակ՝ Խնճորեսկում արդեն 325 հա ցորենի ցանքատարածություն փտել է: Դրա հետ մեկտեղ, եղանակային անբարենպաստ պայմաններից տուժած գյուղացիներին պետությունը փոխհատուցում չի տրամադրի (բայց կաջակցի): Նախքան ոլորտում ապահովագրական համակարգի ներդրումը, ճիշտ չէ փոխհատուցման մասին խոսելը»:

Հարց է առաջանում, գյուղացին մեղավո՞ր է, որ այդ համակարգը չի ներդրվում:

Չափազանց կարևոր է հիմնական սննդամթերքների ինքնարավության մակարդակի բարձրացումը: Ներկայումս տեղական արտադրության հաշվին, էներգետիկ արժեքով հաշվարկված, բավարարվում է կենսական կարևորագույն պարենամթերքի շուրջ 57-60 տոկոսը: Այժմ մշակվել է ծրագիր՝ մինչև 2021թ., ըստ հաշվարկների՝ ինքնարավության մակարդակը ևս 15-20 տոկոսային կետով ավելացնելու հմարավորություն կա:

Հայաստանի գյուղատնտեսությունը հետայսու կշարունակի աշխատանքները թարմ մրգի, խաղողի, հացահատիկի, կարտոֆիլի ու դրանց վերամշակումից ստացվող բազմաթիվ արտադրատեսակների, ինչպես նաև մսամթերքի ու կաթնամթերքի լայն տեսականու արտադրության ուղղությամբ: Ընդ որում, առաջիկա տարիներին կազմակերպվելու է շաբարի (շաքարավագի) տեղական արտադրությունը, որի արդյունքում ոչ միայն կրավարարվի այդ կարևորագույն (անփոխարինելի) սննդատեսակի պահանջարկը ներքին շուկայում, այլ նաև հնարավորություն կընծեռնի տարեկան շուրջ 100-120 հազ.տ. արտահանել արտերկիր:

Գյուղատնտեսության հիմնական ճյուղերի զարգացման կարևորագույն միջոցառումներից են՝ բուսաբուծության ճյուղում՝ 1) ազրոտեխնիկայի առաջադիմական համակարգի ներդրման ապահովումը, 2) գյուղատնտեսական հողատեսքերի բերրիության բարձրացումը, 3) ոռոգման համակարգի և հողերի մելիորատիվ վիճակի բարելավումը, 4) արոտավայրերի բարելավման և ջրարբիացման միջոցառումների իրականացումը, 5) օրգանական գյուղատնտեսության խթանման նպատակով սուբսիդավորման մեխանիզմների մշակումը և ներդրումը, և այլն: Անասնապահության ճյուղում՝ 1) սոհմանական գործի բարելավումը, արհեստական սերմնավորումը, 2) հակահամաճարակային և ախտորոշիչ միջոցառումների լիարժեք իրագործումը, 3) կերարտադրության և գյուղենդանիների կերակրման ու պահպանման պահածքի բարելավումը:

Հիմնական պարենամթերքի գծով մեկ շնչի սպառումը, ՀՀ առողջապահության նախարարության կողմից մեկ շնչի հաշվով, օրական սպառվող սննդամթերքների էներգետիկ արժեքը չպետք է ցածր լինի 2412 կգ-ից: Առանձին սննդամթերքի գծով սպառումն առայժմ (մեկ շնչին) չի բավարարվում:

Բժշկագիտությունը սահմանել է, որ ՀՀ պայմաններում նորմալ կենսագրծունեության համար 1 մարդուն անհրաժեշտ է տարեկան սպառել՝

հացահատիկ – 121 կգ

ֆիզիկական պտուղ և խաղող – 92 կգ

նորմաներ միս – 76 կգ

կաթ և կաթնամթերք – 392 կգ

ձու – 251 կգ

ձուկ – 12,8 կգ:

Մինչեռ այժմ մեզ մոտ նշված առանձին մթերքների փաստացի սպառումը դեռևս ցածր է: Ներկայումս (2010թ. տվյալները) տեղական արտադրության հաշվին, Եներգետիկ արժեքով հաշվարկված, բավարարվում է կենսական կարևորագույն պարենամթերքի նկատմամբ պահանջարկի շուրջ 56-60%-ը: Սակայն երկրի բնատնտեսական ներուժը միջնաժամկետ հեռանկարում հնարավորություն է ընձեռում ավելացնել ինքնարավորթյան մակարդակը ևս 10-12 տոկոսային կետով:

Կարևոր են նաև սննդամթերքի տեղական արտադրության և ինքնարավորթյան մակարդակի տվյալները, որոնք ներկայացվում են 2004-2009թթ. միջին ցուցանիշներով՝

արտադրվել է	ինքնարավորթյան մակարդակը
1) ցորեն 229 հազ.տ.	38%
2) պտուղ, հատապտուղ 210 հազ.տ.	93%
3) բուսական յուղ 0,8 հ.տ.	4,3%
4) շաքար 30 հազ.տ.	2,4%
5) կաթ 621 հազ.տ.	98%
6)տավարի միս 41 հազ.տ.	77,7%
7) խոզի միս 10 հազ.տ.	50,6%
8) ոչխարի միս 7 հազ.տ.	107%
9) հավի միս 5,4 հազ.տ.	20,4%
Ինքնարավորթյան մակարդակը՝ (Եներգետիկ արժեքով հաշվարկած, %) 58,5%	

Ընդհանրացված նշենք, որ կարտոֆիլի, պտղի, բանջարեղենի, խաղողի, կաթի, ձվի նկատմամբ բնակչության սպառողական պահանջարկը հիմնականում բավարարվում է տեղական արտադրության հաշվին, սակայն ցորենի (38%), շաքարի (2,4%), բուսական յուղի (4,3%), տավարի մսի (77%), խոզի մսի (5%) և հավի մսի (20%) պահանջարկը հիմնականում բավարարվում է ներմուծման հաշվին:

Հանրապետությունում ինքնարավորթյան մակարդակը Էներգետիկ հաշվարկով կազմում է ընդամենը 58%, և առաջիկայում այն կարող է ավելանալ ևս 5-10%-ով:

Հանրապետության գյուղատնտեսության նախարարության և Ազգային ակադեմիայի Մ. Քոքանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի կողմից համատեղ ուսումնասիր-վեցին հանրապետության պարենային անվտանգության կարևոր հարցը՝ համապատասխան եզրակացություններով և առաջարկող միջոցառումներով: Հասուկ ուշադրություն դարձվեց մսի արտադրությանը, քանի որ տավարի մսի ինքնարավորթյունը չի անցնում 77%-ից, իսկ խոզի մսին էլ 50%-ից:

Ուսումնասիրությունները և համաշխարհային փորձը վկայում են, որ կոռպերացումը հաջողությամբ կարող է լուծել մի շաքր հիմնախնդիրներ, մասնավորապես կապված նյութատեխնիկական ապահովման, արտադրանքի վերամշակման և իրացման, աշխատանքների մեքենայացման մակարդակի բարձրացման հետ և այլն: Առավել արդիական են արտադրանքի իրացման և սպառման գործընթացները: Այսօր գյուղատնտեսական արտադրանքի իրացման և սպառման հարցերը մեծապես պայմանավորված են պատահական վերավաճառողների թելադրանքով: Այդ իսկ պատճառով, առաջին հերթին, անհրաժեշտ է ձևավորել իրացման և սպառման աշխատանքները կազմակերպող կոռպերատիվներ:

Վերջին տարիներին հանրապետության ազրուարենային ոլորտում ձևավորվել են տարբեր գործառույթ իրականացնող, կոռպերացման սկզբունքով գործող կառույցներ՝ կոռպե-

բատիվներ, միավորումներ և ասոցիացիաներ, որոնց գործունեության նպատակը ծառացած խնդիրների համատեղ լուծման կամ դրանց մեղմացման ճանապարհով գյուղական համայնքներում արտադրության զարգացման խթանումն է:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գյուղատնտեսական կոռպերացիան դեռևս շատ թույլ է զարգանում: Այս գործընթացը խթանելու և որոշակի պետական աջակցությամբ ակտիվացնելու համար անհրաժեշտ է հստակեցնել գյուղատնտեսական կոռպերատիվների իրավաօրենսդրական հիմքերը՝ այդտեղ շեշտադրելով նաև պետական աջակցության և խթանման մեխանիզմները:

Մեր կարծիքով, ոլորտում ի վերջո կոռպերատիվների ձևավորումը հնարավորություն կստեղծի համատեղ օգտագործելու արտադրության տեխնիկական միջոցները, արդյունավետ կազմակերպելու գյուղմթերքների վերամշակումն ու իրացումը, որի արդյունքում կոռպերատիվի անդամները կստանան ինչպես տնտեսական մեծ օգուտ, այնպես էլ կճգտեն իրենց տնտեսությունը հասցնել ավելի բարձր տեխնիկական ու տեխնոլոգիական մակարդակի:

Համոզված ենք, որ այդ դեպքում նաև կիսրանվի ազրոշուկայի ձևավորումն ու զարգացումը, որն իր հերթին կնպաստի արտաքին շուկայի հետ նորմալ հարաբերությունների կարգավորմանը, կստեղծվեն բարեմասսատ պայմաններ տեղական ու արտասահմանյան գործարարների կողմից հանրապետության ազրարային ոլորտում ներդրումներ կատարելու համար: Գյուղում կստեղծվի նոր սոցիալ – տնտեսական իրավիճակ, հիմնականում կլուծվեն գյուղական բնակչության զբաղվածության հիմնախնդիրները:

Հանրապետությունում մոտակա հեռանկարում բոլոր դեպքերում առավել նախընտրելի կլինեն այնպիսի տնտեսությունները, որոնք կոռպերացնեն իրենց ջանքերը՝ կիրառելու առավելապես բարձր արտադրողական, մեքենայացված աշխատանքը: Մասնավորապես, առանձին դեպքերում լայնորեն կարող է կիրառվել փոքր տեխնիկան, ինչը ձևավորվող, ճշշտ է կոռպերացված, սակայն համեմատաբար փոքր արտադրության ծավալների դեպքում առավել նախընտրելի է:

Կարելի է եզրակացնել, որ ճգնաժամի ընթացքում խոշոր բիզնեսը գրեթե չի վնասվել, և շատ ընկերություններ արդեն գտնվում են մինչճգնաժամային վիճակում: Դա կարելի է բացատրել նրանով, որ մեր խոշոր ընկերությունները պրակտիկորեն կապված չեն գլոբալ ֆինանսական շուկայի հետ, իսկ իրացման շուկաները (սպառող) բոլոր երկրներն ընդհանուր ջանքերով արագ վերականգնում են: Բացի այդ, Հայաստանը հիմնականում արտահանում է արդյունաբերական որոշ հումքեր, որոնք մշտապես ունեն իրենց շուկան:

Ինչ վերաբերում է փոքր բիզնեսին, ապա դա խիստ տուժեց, քանի որ այն ունի արդյունավետության շատ ցածր ցուցանիշներ, ել չասած այն մասին, որ այդ ձեռնարկությունների գրեթե կեսն ընդհանրապես չի գործում:

Ամենամեծ հիմնախնդիրը անարդարացի և ոչ հավասար մրցակցությունն է, երբ խոշոր բիզնեսը խլում է փոքր բիզնեսից նրա վերջին դիրքերը, երբ այսպես ասած առանձին անհատները սկսում են արտադրել «հասուկ սալաթներ», բացել տաքսի – ծառայություններ և այլն: Մյուս պատճառն այն է, որ սնանկ և ցածր կարողությամբ կազմակերպությունների լուծարումը չափազանց բարդ ընթացակարգ է: Զեռնարկությունը պետք է մարի իր պարտքերը, որպեսզի իրավունք ունենա անցնել այդ համակարգով. դա օրենքի պահանջն է: Արդյունքում, անհաջողակ բիզնեսմենները սառեցնում են իրեն չարդարացնող կամ սպասած արդյունքը չտված ձեռնարկություններն ու բացում նորը: Իհարկե, արդեն ՀՀ կառավարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանը հանձնարարել է զբաղվել ձեռնարկությունների սնանկացման և լուծարման հարցերով:

Հանրապետության ազգարային համակարգի Ենթակառուցվածքների գարգացման համապարփակ ծրագրի բացակայության պատճառով, այդ բնագավառում միասնական համակարգված քաղաքականություն չի իրականացվում: Ենթակառուցվածքների բարելավումը բարդ և դիմամիկ գործընթաց է, որը պետք է համահունչ լինի տնտեսության մեջ ձևավորված հարաբերություններին ու կանխատեսվող իրավիճակին: Սակայն, այդ պատասխանատու և շատ կարևոր բնագավառում դեռևս առկա են բազմաթիվ չլուծված խնդիրներ, որոնց հանգուցալուծմամբ մեծապես պայմանավորված են ազրարային համակարգի հետագա գարգացումն ու արդյունավետության բարձրացումը:

ՀՀ ազրարենային համակարգի գարգացման գործում մեծ տեղ պետք է հատկացվի նաև բնապահպանական գյուղատնտեսությանը և այս ոլորտի ռազմավարական ծրագրերը պետք է խթանեն այն արտադրատեսակները, որոնք ունեն արտահանման ներուժ և առավել նպաստավոր են ոլորտի գարգացման համար: Բնապահպանական գյուղատնտեսության մեջ, գյուղացու համար անմատչելի թանկ ազրոքիմիկատների փոխարեն, կիրառվող օրգանական նյութերն ու պարարտանյութերը բույլ են տալիս նվազեցնել գյուղացիական տնտեսությունների արտադրական ծախսերը, ինչպես նաև կախվածությունն արտաքին ֆինանսական կամ այլ տեսակի աջակցությունից:

Էկոլոգիական գյուղատնտեսությունը, որն ամբողջովին հիմնված է տեղական հումքի օգտագործման վրա, լուծում է նաև բնական էկոհամակարգերի և շրջակա միջավայրի պահպանման շատ հարցեր ու սպառողներին ապահովում առողջ, ավելի սննդարար և անվտանգ սննդամբերով (նման օրինակներ հանրապետությունում կան):

Տնտեսական նոր հարաբերությունների գարգացումը պահանջում է սոցիալական, տնտեսական, կառուցվածքային, ներդրումային, հարկային, բյուջետային, արտաքին տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման այնպիսի մոտեցումներ, որոնք, ենթեղով շուկայական տնտեսավարման սկզբունքներից, տնտեսավարող սուբյեկտների արդյունավետ գործունեության համար կատեղծեն առավել բարենպաստ պայմաններ: Կարևորագույն խնդիր պետք է դառնա հանրապետության տնտեսության բոլոր ճյուղերի գարգացման հիմնական ուղղությունների բացահայտումը, դրանցով պայմանավորված գործնքացների օրենսդրախրավական կարգավորումը, գործունեության բոլոր ոլորտներում համապատասխան քաղաքականության ձևավորումը, ինչպես նաև դրա իրականացման իրատեսական մեխանիզմների ներդրման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը: Իսկ գյուղատնտեսության մեջ ճգնաժամի հետևանքների վերացման ու ճյուղի հետագա գարգացման հնարադրությունները մեծ են: